

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՎԱՐԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն, տ. գ. դ. պրոֆեսոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՆՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տեղական ինքնակառավարման մարմիններին օժտելով հսկայածավալ լիազորություններով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև համայնքների բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուրները, որոնք սահմանափակ են ինչպես եկամտի աղբյուրների թվի, այնպես էլ հարկման բազայի, հարկադրույքների ու ընդգրկվածության առումով: Ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ.

- Համայնքային բյուջեների եկամտային հիմնական աղբյուր հանդիսացող գույքային հարկերի ձևավորման և դրանց գանձման նկատմամբ հսկողություն իրականացնելու օրենսդրական հիմքեր ավագանիներն ու համայնքները գրեթե չունեն, այսինքն՝ վերջիններս «գրկված են» տեղական ինքնակառավարման մակարկայանում և նրանում, որ գույքային հարկերի հարկման բազան (շինությունների գույքահարկի և հողի հարկի մասով) որոշում են իշխանության հանրապետական մարմինները՝ հանձնա անշարժ գույքի կադաստր վարող պետական մարմնի, հարկի դրույքաչափերը սահմանում է հանրապետության օրենսդիր մարմինը՝ հանձնա ԱԺ-ի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով հարկերի (այդ թվում գույքային) հաշվարկման ու վճարման կարգի նկատմամբ հսկողություն իրականացնում են իշխանության հանրապետական մարմինները, իսկ գույքային հարկերի ծրագրային առաջադրանքների կատարման պատասխանատվությունը կրում են տեղական ինքնակառավարման մարմինները, այսինքն՝ տեղական ինքնակառավարման մարմինները գրկված են նշված հարկատեսակների ձևավորման, դրանց գանձման նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություններից: Դեռ ավելին, այս պայմաններում տեղական ինքնակառավարման մարմինները չափազանց մեծ կախվածության մեջ են գտնվում իշխանության հանրապետական մարմիններից և, իրականում, վտանգվում է տեղական ինքնակառավարման մարմինների վրա օրենքով դրված պարտադիր լիազորությունների իրականացումը: Վերջինս պայմանավորված է ոչ միայն վերը բերված փաստարկներով, այլև հողի հարկի հաշվարկման հիմք հանդիսացող կադաստրային գնահատմամբ որոշվող հաշվարկային գուտ եկամտի (գյուղատնտեսական նշանակության հողերի մասով), կադաստրային գնահատման արժեքի (ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի մասով) և դրանց նկատմամբ կիրառվող հարկադրույքների (բնակավայրերի ներսում՝ 1%, բնակավայրերից դուրս՝ 0,5%) ցածր, ինչպես նաև գույքահարկով հարկվող օբյեկտների շրջանակների սահմանափակ լինելու հանգամանքներով: Դեռ ավելին, գույքահարկի հարկման օբյեկտ հանդիսացող շենքերի ու շինությունների զգալի մասը (հատկապես գյուղական վայրերում) ունենալով 3 մլն դրամը չգերազանցող կադաստրային արժեք, սահմանված կարգով հարկվում են գրոյական դրույքաչափով՝ համայնքային բյուջեների զգալի մասին գրկելով եկամտային այս աղբյուրից: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ գույքահարկի հարկման օբյեկտների ցանկում «անհասկանալիորեն հայտնվել են» այնպիսիները, ինչպիսիք հանրապետությունում գրեթե չկան: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում, որպես հարկվող օբյեկտներ, սահմանված «ջրային փոխադրամիջոցներին» և «մտոցիկլետներին», այն դեպքում, երբ հարկման օբյեկտներ չեն դիտարկվել հոսքագծերը, հաստոցները և այլն: Այլ կերպ ասած՝ ոչ միայն սահմանափակված է գույքահարկով հարկվող օբյեկտների շրջանակը, այլև ընտրված է հարկվող օբյեկտների ոչ տրամաբանական և տնտեսագիտական հիմնավորում չունեցող ցանկ:

Եթե վերը բերված փաստարկներին էլ հավելենք այն, որ գույքային հարկերի մեծությունը կախված չէ հարկատուների տնտեսական գործունեության արդյունքներից, ապա պարզ է դառնում, թե ինչու հանրապետության տնտեսության երկնիշ թվերով աճն իր համարժեք արտացոլումը չի ստանում համայնքային բյուջեներում, իսկ հարկային եկամուտներն անարդար են բաշխվում կառավարման երկու մակարդակների միջև՝ նպաստելով Երևանի ու մարզերի միջև տնտեսական զարգացման տարբերությունների խորացմանը: Այդ առումով կարևոր քայլ կարող է հանդիսանալ եկամտային հարկերից (շահութահարկ, եկամտահարկ) համայնքային բյուջեներին տարբերակված տոկոսներով մասնաճանաչման մեխանիզմի կիրառումը, որը հաջողությամբ գործում էր նախկին ԽՍՀՄ-ում և շարունակում է գործել նաև մի շարք զարգացած երկրներում:

- Համայնքային բյուջեներին ամրակցված պետական տուրքերի 2 տեսակները եկամտի աղբյուր են դառնում միայն սահմանափակ թվով համայնքների համար, քանի որ սահմանված կարգի համաձայն՝ պետական տուրքի այդ տեսակները (քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական գրասենյակների մասով) մուտքագրվում են այն համայնքների բյուջեներ, որոնց վարչական տարածքում գտնվում են այդպիսի ծառայություններ մատուցող մարմինները (ԶԱԳՍ-երը և նոտարական գրասենյակները) մանավանդ, որ դրանք հանրապետության տարածքում տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ և, դեռ ավելին, համայնքների գերակշիռ մասում դրանք ուղղակի չկան: Հետևաբար՝ պետական տուրքի նշված տեսակները համայնքային բյուջեների գերակշիռ մասի համար եկամտի աղբյուր չեն հանդիսանում: Ուստի,

անհրաժեշտ է հրաժարվել համայնքային բյուջեների եկամտային բազան «համալրող» արհեստական մոտեցումներից՝ այն դիտարկելով որպես պետական բյուջեի եկամտային աղբյուր:

• Համայնքային բյուջեներին ամրակցված տեղական տուրքերի ու վճարների զգալի մասը համայնքային բյուջեների եկամտի աղբյուր են հանդիսանում միայն Երևանի թաղային և հանրապետական նշանակության քաղաքների բյուջեների համար: Այլ կերպ ասած՝ «Տեղական տուրքերի ու վճարների մասին» ՀՀ օրենքի գործողության դաշտը ներառում է միայն քաղաքները և չունի հանրապետական նշանակություն: Հետևաբար նշված օրենքը արմատական փոփոխությունների կարիք ունի՝ կապված տեղական տուրքերի ու վճարների ցանկը ընդլայնելու և մյուս համայնքներում լայն տարածում ստացած գործառնություններից զանձվող եկամտատեսակներով համայնքային մնացած բյուջեների եկամտային բազան ամրապնդելու հիմնախնդրի լուծման հետ: Այլ կերպ ասած՝ որպես տեղական տուրքերի տեսակ կարող են լինել արդյունաբերության օգտագործման, ընդերքի շահագործման ու շրջակա միջավայրի աղտոտման դիմաց զանձվող գումարները և այլն: Նշված և այլ եկամտատեսակների անհրաժեշտությունը առավել կարևորվում է այն առումով, որ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների եկամտային բազան ոչ հարկային եկամուտների մասով նվազման միտում ունի: Խոսքը մասնավորապես վերաբերում է համայնքի սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց զանձվող վարձավճարների, ինչպես նաև համայնքի սեփականություն համարվող հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձավճարների նվազմանը՝ կապված սեփականաշնորհման ակտիվ և ավարտական գործընթացների հետ: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական իրավաստությունների համար կիրառվող պատժամիջոցներից ստացվելիք եկամուտներին ու համայնքի սեփականություն համարվող ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթից կատարվող մասհանումներին, ապա պետք է նշել, որ վարչական իրավաստությունների համար կիրառվող գումարները փոքր են ու դեպքերը քիչ (կապված ազգային մտածելակերպի հետ), իսկ համայնքի սեփականություն համարվող ընկերությունների տրամադրության տակ մնացող շահույթներն աննշան են կամ ուղղակի բացակայում են: Ուստի, անհրաժեշտ է նաև աշխատանքներ տանել այլընտրանքային ոչ հարկային եկամուտների բացահայտման ուղղությամբ մասնավոր, որ հանրապետության գրեթե բոլոր համայնքային բյուջեներում բացակայում է ոչ հարկային մնացած եկամտատեսակների (տեղական վճարների, տիրագործ, ժառանգության իրավունքով կամ նվիրատվության ձևով համայնքի տնօրինման անցած գույքի օտարումից առաջացած եկամուտների և այլն) գծով մուտքերը, այսինքն՝ օրենքով սահմանված այդ եկամտատեսակներից համայնքային բյուջեները իրականում մուտքեր չեն ունենում:

Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներին՝ որպես եկամտային աղբյուր, ամրակցված են նաև համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները:

• Վարկերի և փոխատվությունների ձևով ներգրավված միջոցները, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները: Սակայն պետք է փաստել, որ նման եկամտատեսակներով համայնքային բյուջեի եկամտի ձևավորման փաստ հանրապետությունում դեռևս չի արձանագրվել, որը պայմանավորված է դրանց ներգրավման հետ կապված բարձր ռիսկերի առկայության հետ:

• Պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցները, որոնք ուղղվում են. ա) Երևան քաղաքի համաքաղաքային կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորմանը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում տեղաբաշխված գույքի մասնավորեցումից ստացվող մուտքերի 30 տոկոսի չափով և բ) Հայաստանի Հանրապետության մարզերում գտնվող համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված պարտադիր լիազորությունների ֆինանսավորմանը՝ այդ համայնքի վարչական տարածքում տեղաբաշխված անշարժ գույքի, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացվող մուտքերի 30 տոկոսի չափով:

Համայնքային բյուջեներին՝ ամրակցված եկամտային աղբյուրներից իրական և էական են հանդիսանում գույքային հարկերն ու պաշտոնական տրանսֆերտների ձևով տրվող հատկացումները և, մասնավորապես, պետական բյուջեից, այսպես կոչվող, «ֆինանսական համահարթեցման» սկզբունքով տրամադրվող դոտացիաները, որոնք մի կողմից մեծացնում են համայնքների կախվածությունը իշխանության հանրապետական մարմիններից և մյուս կողմից ավելի են խորացնում Երևան քաղաքի ու մարզերի, ինչպես նաև հանրապետության մյուս քաղաքների ու գյուղերի միջև առկա սոցիալ-տնտեսական զարգացման տարբերությունները, որոնց պատճառները «թաքնված են» նաև դոտացիաների հատկացման մեխանիզմներում:

Բանը նրանում է, որ 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների դոտացիաների մեծության որոշման հիմքում դրվում է¹. ա) համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը (այսուհետ՝ «ա» գործոն) և բ) համայնքի բնակչության թիվը (այսուհետ՝ «բ» գործոն): Դրանք տնտեսագիտական հիմնավորում չունեն, քանի որ մեկ շնչին ընկնող գույքահարկը և հողի հարկը համայնքի տնտեսական վիճակը բնութագրող գործոններ չեն կարող հանդիսանալ, մասնավորապես, որ այդ հարկատեսակների մեծությունը պայմանավորված չէ հարկատուների տնտեսական գործունեության արդյունքներով: Իրականում գույքահարկ վճարում են հարկման օբյեկտ հանդիսացող գույքի սեփականության իրավունք ունեցողները, իսկ հողի հարկ՝ հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները: Դեռ ավելին, «ա» գործոնով դոտացիա է նախատեսվում այն համայնքներին, որոնց բնակչության (խոսքը վերաբերում է մշտական բնակչությանը) մեկ շնչին ընկնող հողի

¹ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

հարկի և գույքահարկի գծով եկամտի մակարդակը ցածր է հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի, գույքահարկի և «ա» գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարի գծով միջին եկամտի սահմանային մակարդակից: Դա նշանակում է, որ տարեցտարի նվազող կապես գյուղական համայնքներում, որոնցում աճում են արտագաղթի դեպքերը և դեպի հանրապետության լինել նաև համայնքի բնակչության թիվը: Մինչդեռ վերջինս դիտարկված է որպես դոտացիայի հատկացման բնակչության թիվը բազմապատկելով մեկ շնչին ընկնող դոտացիայի մեծությամբ, որը հաշվարկվում է «բ» գործոնով նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարը հարաբերելով հանրապետության բնակչության ընդհանուր թվին: Այս դեպքում ևս համայնքի բնակչության թվի նվազեցումը հանգեցնում է դոտացիայի գումարների կրճատմանը՝ բացառությամբ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների, որոնց բյուջեներին նախատեսվող դոտացիաները հաշվարկվում են հավասարաչափ¹:

Այսպիսով, դոտացիաների հաշվարկման գործող մոտեցումները, կարելի է ասել, չեն նպաստում համայնքների ներդաշնակ զարգացման ապահովմանն ու համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցմանը՝ նպատակ, որ դրվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքում:

Տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման նպատակով համայնքային բյուջեները բաժանված են երկու մասի՝ վարչական բյուջե և ֆոնդային բյուջե, որոնց ամրագրված բյուջետային մուտքերի աղբյուրները, ինչպես նաև ծախսային ուղղությունները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով:

Համայնքի վարչական բյուջեից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման հետ կապված ընթացիկ, բյուջետային փոխառությունների մարման և պետության պատվիրակված լիազորությունների կատարման հետ կապված ծախսերը: Ինչ վերաբերում է վարչական բյուջեում ձևավորվող պահուստային ֆոնդին, ապա այն կարող է օգտագործվել բյուջեով չնախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար՝ վարչական բյուջեի եկամուտների 5-ից 20 տոկոսի չափով: Ընդ որում, եթե վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կարող են ֆինանսական միջոցներ ուղղվել ֆոնդային մաս, ապա հակառակը չի թույլատրվում: Ինչպես պահուստային ֆոնդը, այնպես էլ տարեսկզբի ազատ մնացորդը, այսինքն՝ նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում իրականացված ծախսերի նկատմամբ մուտքերի գերազանցված գումարը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեով նախատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Մինչդեռ համայնքի ֆոնդային բյուջեից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման հետ կապված կապիտալ և ստացված վարկերի մարման ծախսերը: Ֆոնդային բյուջեում կարող է ձևավորվել պահուստային ֆոնդ և օգտագործվել տվյալ տարվա բյուջեով չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար: Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդը չի կարող գերազանցել ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը: Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ ֆոնդային բյուջեին ամրագրված եկամտային աղբյուրները իրատեսական չեն, քանի որ. ա) համայնքային բյուջեներում դեպոզիտների ձևով ստացվող եկամուտները բացակայում են, բ) համայնքները գործնականում վարկ չեն վերցնում և պարտատոմսեր չեն թողարկում, գ) կապիտալ ծախսերի ֆինանսավորման սուբվենցիաներ, որպես կանոն, չեն հատկացվում, դ) համայնքային սեփականության օտարումից ստացվող միջոցները նվազման միտում ունեն:

Այսպիսով, վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ հանրապետությունում քաղաքական իշխանության ապակենտրոնացումը, այսինքն՝ իշխանության հանրապետական մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին որոշումների ընդունմանն ու դրանց իրականացման փոխանցված իրավունքները չեն ուղեկցվել ֆինանսական միջոցների ապակենտրոնացմամբ, որի ուղիներն են հանդիսանում.

1. Գույքային հարկերի մասով.

1.1. Գույքային հարկերի գծով հսկողություն և «բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության» ստուգումներն ու ուսումնասիրությունները կատարելու իրավասություններով տեղական ինքնակառավարման մարմիններին օժտելը՝ նկատի ունենալով այդ հարկատեսակների ծրագրային առաջադրանքների կատարման նկատմամբ տեղական ինքնակառավարման մարմինների շահագրգիռ վերաբերմունքի հանգամանքը: Նշված հիմնախնդրի լուծումը անհրաժեշտաբար պահանջում է փոփոխության ենթարկել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը՝ դրանում ամրագրելով գույքային հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հսկողություն իրականացնելու իրավասությունը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների իրականացման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը՝ դրանում ամրագրելով գույքային հարկերի գծով ստուգումներ և ուսումնասիրություններ կատարելու վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը:

1.2. Օրենսդիր մարմնի կողմից գույքային հարկերի հարկման բազաների ու հարկադրույքների ոչ թե միասնական, այլ նվազագույն և առավելագույն մեծությունների միջակայքի սահմանումը, իսկ կոնկրետ մեծության սահմանման իրավասությունն անհրաժեշտ է վերապահել համայնքի ավագանուն, քանի որ համայնքներին է «առավել տեսանելի» իրենց վարչական տարածքում գտնվող գույքի շուկայական գինը, գույքատերերի վճարունակության աստիճանը և այլն (ի դեպ, այսպիսի մոտեցում արդեն իսկ կիրառվել և

¹ Նույն տեղում, հոդված 6:

հաջողությամբ գործում է «Տեղական տուրքերի ու վճարների մասին ՀՀ օրենքի պարագայում»: Նշված հիմնախնդրի լուծումը պահանջում է փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 34-րդ հոդվածներում, ինչպես նաև «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» օրենքներում: Փոփոխություններ անհրաժեշտ է կատարել նաև գույքահարկի հարկման օբյեկտների ցանկի ընդլայնման առումով՝ դրանում ներառելով հոսքագծերը, հաստոցները, մեքենա-մեխանիզմները և այլն, որոնք գույքահարկով հարկվել են ոչ վաղ անցյալում, ինչպես նաև հողի հաշվարկման մեխանիզմներում, որոնք սահմանվել են դեռևս 1994 թվականին ընդունված «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով:

2. Եկամտային հարկերից համայնքային բյուջեներին տարբերակված տոկոսներով մասհանումների մեխանիզմի կիրառումը, որը կնպաստի համայնքի վարչական տարածքի ֆինկալային հնարավորությունների մեծացմանը՝ հրաժարվելով դոտացիաների հատկացման գործող մոտեցումներով դոտացիաների տրամադրման պրակտիկայից և մինչև նոր մոտեցումների ամրագրումը հիմնախնդիրը լուծել եկամտային հարկերից մասհանումների մեխանիզմի կիրառմամբ: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում նաև համայնքային բյուջեներին ամրակցված պետական տուրքերը դարձնել պետական բյուջեի եկամտային աղբյուր:

3. «Տեղական տուրքերի ու վճարների մասին» ՀՀ օրենքի էական փոփոխությունը տեղական տուրքերի անվանացանկի ընդլայնման ու դրանց չափերի մեծացման առումով, մասնավորապես, որ տեղական բյուջեների եկամուտների ձևավորման հիմք հանդիսացող հարկերի ու տուրքերի տեսակների թիվը Ֆրանսիայում գերազանցում է 50-ը, Բելգիայում այն մոտ 100 է, իսկ ՀՀ-ում չի գերազանցում 25-ը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՄԻՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային իշխանության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը տնտեսական բարեփոխումների ուղին բռնած ԱՊՀ-ի անդամ մյուս երկրների նման կանգնեց տնտեսության մեջ օբյեկտիվորեն առաջացած բարդ խնդիրների առջև: Տասնամյակների ընթացքում տարբեր ձեռնարկությունների միջև ձևավորված ինտեգրացիոն կապերի խզումը, սպառման լծակների կորուստը, երկրի տնտեսական շրջափակումն ու պատերազմական իրավիճակը, ինչպես նաև զենքի ազատականացումն ու բյուջեի ֆինանսավորման, այդ թվում՝ կապիտալ ներդրումների խիստ կրճատումը տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծեցին խիստ անբարենպաստ պայմաններ: Տրանսպորտային և էներգետիկ ծախսերի կտրուկ աճի հետևանքով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության ճյուղերը հայտնվեցին խորը ճգնաժամի մեջ: Բնական է, որ տվյալ պայմանները չէին կարող նպաստել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի զարգացմանը:

1996թ. հիմնարար բանկային օրենքներ ընդունելուց հետո վստահելի շրջանակ ստեղծվեց առևտրային բանկերի գործունեության համար: Ըստ այդ օրենքի՝ բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը, ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և ներդրումներ կատարելու միջոցով: Առանց Կենտրոնական բանկի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի Հայաստանի Հանրապետության տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը (ՀԿԲ) ընդունել է նաև լրացուցիչ դրույթներ՝ հնարավոր դարձնելու օրենսդրական փոփոխությունների իրականացումը և նոր օրենքներով երաշխավորելու գոյություն ունեցող ստանդարտների կատարումը:

Բանկային համակարգը ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 95%-ը:

1998 թվականին ՀՀ տարածքում գործել են 30 առևտրային և մասնագիտացված բանկեր՝ իրենց 174 մասնաճյուղերով ու բաժանմունքներով՝ 1997 թվականի 33 բանկերի դիմաց: Ընդ որում, ՀՀ բանկերից 17-ը փակ բաժնետիրական ընկերություններ էին, 5-ը՝ բաց բաժնետիրական ընկերություններ, 7-ը՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և 1-ը՝ կոոպերատիվ բանկ: Բացի այդ, ՀՀ տարածքում գործում են նաև օտարերկրյա բանկերի 3 դուստր բանկեր: 2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 բանկեր՝ 233 մասնաճյուղերով: 2005 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր (267 մասնաճյուղերով): 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը բաղկացած է եղել 21 առևտրային բանկերից (299 մասնաճյուղերով):

Եթե նախկինում բանկերը կարող էին ունենալ արտարժույթով պարտադիր ռեզերվներ, ապա 1999թ. ապրիլից վերջիններս առևտրային բանկերի համար կարող են պահվել միայն տեղական արժույթով, իսկ բաց օտարերկրյա արժույթի դիրքերի սահմանափակումները նվազեցին մինչև կապիտալի 30%՝ 2000թ. հունվարից 25%՝ հետագա կրճատմամբ: Գոյություն ունեցող առևտրային բանկերի համար կապիտալի նվազագույն պահանջները 2000թ. հունվարից աճեցին մինչև 1 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2003թ. աստիճանաբար՝ 3 մլն. ԱՄՆ